№ 15 Փետրվարի 2 (14) 1880 Փետրվարի 2 (14) № 15

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թ-ին

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօնների հետևեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ԱՆՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Երևանից։ Նամակ Դերբենդից։ Նամակ Սարիղամիշից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Անգլիա։ Նամակ Պարսկաստանից։ Նամակ Պարսկաստանից։—Խառն լուրեր։ — Յայտարարութիւններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

—

Այս յօդուածով մենք կամենում ենք սկսել «Մշակի» մէջ «Քաղաքական մտածմունքներ» վերնագրով յօդուածների մի շարք, որոնց ժամանակ առ ժամանակ առաջնորդող յօդուածի տեղ կը տպենք։

Մենք այդ յօդուածների մէջ հաղորդելով ընթերցողին մի որ և է քաղաքական նորութիւն, կամ վերցնելով այս ու այն քաղաքական կամ հասարակական երևոյթ, կաշխատենք նրանց վրա մի թեթև քննողական հայեացք գցել։

Ամբողջ Եւրոպայի համար այժմ մի տեսակ հանելուկ է Գերմանիայի սարսափելի զինուորվելը։ Ի՞նչ նպատակով է զինուորվում Գերմանիան,—յայտնի չէ.... Ո՞ւմ դէմ պէտք է ուղղենա իր հետևեալ արշաւանքը, նոյնպէս յայտնի չէ։ Միայն մի բան յայտնի է որ այդպիսով այդ երկիրը, խաղաղ ժամանակ պահելով մի ահագին զօրք, սպառում է իր ներքին արդիւնաբերական ոյժերը և աւելի ու աւելի տրտունջ է յարուցանում արդիւնաբերող, աշխատող դասակարգի մէջ։ Անցաւ այն ժամանակը երբ աշխատող դասակարգը անգիտակցական կերպով ստրկացած էր ազնուապետական դասակարգի ձեռքով, անցաւ այն ժամանակը, երբ այդ դասակարգը անբան կենդանի էր հարստահարող, շահասէր դասակարգի ձեռքում։ Մեր ժամանակներում դժուար է նոյնպէս յափշտակել աշխատող դասակարգը ունայն փառքի խոստումներով։

Երևելի գերմանական զօրապետ Մոլտկէի նորերումս ասած խօսքերը, թէ խաղաղութիւնը և ազգերի զինաթափ լինելը թէև ցանկալի է, բայց մենք մեր դարում ազգերի այդ ցանկալի դրութիւնը չենք տեսնի, թէ զինաւորվելու դէմ առաջն առնելու անզօր են մինչև անգամ ազգերի պետերը, թագաւորները և կայսրները և թէ այդ բաղդաւոր դրութիւնը այն ժամանակ կիրագործվի, երբ ազգերը այն գիտակցութեանը կը հասնեն, որ պատերազմը ազգային դժբաղդութիւն է,—Մոլտկէի այդ խօսքերը խիստ քննադատութեան արժանի են։

Երևելի զօրապետը կարծում է որ ոչնչացնել պատերազմը կարող է միմիայն ազգերի կրօնական և բարոյական զարգացումը....

Այո՛ շատ կարելի է որ մաքուր քրիստոնէական զգացմունքը ժամանակով կը ոչնչացնի պատերազմները, բայց մինչև այժմ, մարդկութեան ամբողջ պատմութիւնից երևում է որ կրօնական զգացմունքը, ինչպէս մինչև այժմ ըմբռնում էր նրան մարդկութիւնը, քիչ չարաւ պատերազմների յայտնվելուն նպաստելու համար։

Կարելի է միթէ մոռանալ որ այն ազգը, որ ամենից շատ կրօնական էր, հրէաները, միշտ ամենասարսափելի պատերազմներ էր վարում։ Մի՞թէ խաչակրաց պատերազմ դրդողը կրօնական զգացմունք չէր, երեսուն տարվայ աւրիւնահեղ պատերազմը միթէ՞ կրօնական զգացմունքի ծնունդ չէր....

Վերջապէս յայտնի է որ կրօնական զգացմունքից դրդված պատերազմները միշտ ամենասարսափելի, ամենաանխնայ, ամենաարիւնահեղ էին։

Ընդհակառակն, յայտնի է որ ամեն անգամ և ամեն ժամանակներում, երբ տէրութիւնները կամենում էին որ ազգերը աւելի յօժարութեամբ գնային պատերազմի դաշտը, միշտ յարուցանում էին ժողովրդի մէջ մի որ և է կրօնական պատճառ։ Այդպէս անում էին թէ բրիստոնեայ, թէ մահմետական ազգերի և թէ հեթանոս, վայրենի ցեղերի պետերը։

Մոլտկէի կարծիքով դարեր պէտք է անցնեն, մինչև որ իրագործվի ազգերի խաղաղ զարգացման կանոնաւոր դրութիւնը և վերանան պատերազմները։

Մենք կը հաստատենք գերմանացի երևելի զօրապետի խօսքերը, եթէ կրօնական զգացմունք բառի փոխանակ, նա գործածէր աւետարանական ըզգացմունք բառը։

Բայց շատ ցաւալի կը լինէր, եթէ աւետարանական մաքուր զգացմունքին մարդկութեան մէջ հաստատ և խոր արմատներ գցելու համար հարկաւոր էր դարեր և դարեր սպասել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Յունվարի 28-ին

«Մշակի» առաջնորդող յօդուածը «Ձեզ ենք դիմում» վերնագրով շատ ազդու տպաւորութիւն գործեց այստեղի հասարակութեան վրա։ Առանց դասակարգի խտրութեան Ախալցխայի հայ հասարակութիւնը ոգևորված է ամենաջերմ զգացմունքներով ազգային գործը պաշտպանելու համար, և ահա օրինակը. երէկ մի հարսանեաց տօնի ժամանակ ծխակատար քահանան, գերապատիւ հայր Գարեգին Ղազազեանը ներկայացնելով բազմաթեսակ հանդիսականների առաջ հայ պարբերական մամուլի աննախանձելի նիւթական դրութիւնը, այնպիսի համակրութեան ցոյցեր արտայայտեցուաւ, որ բնաւ չէր կարելի սպասել մի քանի հասարակ դասակարգի մարդիկների կողմից։ Բոլորը զոչում էին անլսելի աղաղակներով. «ազնենք, օգնենք» և իսկոյն գցում էին լուման սեղանի վրա։ Ներկայ գտնված զարգացած երիտասարդութիւնը խիստ յուզված էր այս սրտաշարժ տեսարանից և նա իսկոյն որոշեց հիմնել Ախալցխայում մի հաստատ գրականական ֆօնդ, որով կարելի լինի իւրաքանչիւր տարի գոնէ 40 հատ «Մշակ» և «Մեղու Հայաստանի» բերել տալ ձրիաբար բաժանելու ամենահարկաւոր տեղերը։

Նշանաւոր է որ այս հանդիսին լուսաւորչադաւան հայ քահանայի դէմ յանդիման նստած էր կաթոլիկ հայ քահանան, որը պաշտպանում էր իր պաշտօնակցին ամենաջերմ խօսքերով։ Երկու երիտասարդ քահանաների սերտ միութիւնը ազգային գործի մէջ արտափայլվում էր զօրեղ տպաւորութեամբ...

Եօթը եկեղեցապատկան գիւղեր, որ Ախալցխայի հասարակութեանն է պատկանում առել է Էջմիածինը կապալաւ Տէր-Յորէն քահանայից։

Երրորդ անգամ արդէն ընդհանուր խորհուրդի ժողովվելով եկեղեցու սրահում, քաղաքի բոլոր հայ հասարակութիւնը որոշեց՝ անմիջապէս ուղարկել Էջմիածին, չորս պատգամաւոր ամենանշանաւոր անձինքներից Նորին Օծութեան խնդրելու համար, որ խնայէ հայ ժողովուրդը և փոխի այն կարգադրութիւնը։ Պատգամաւորները սյսօր մնաք բարեաւ ասացին ժողովրդին, տանելով իրանց հետ հազար մաղթանք գործի յաջողութեան համար։

* * *

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

24 յունվարի

Խմբագրութեանդ յանձնարարութիւնը մեծ սիրով ընդունեցի և կաշխատեմ, որչափ կը զօրէ կարողութիւնս՝ լինել հետևող խղճիս աւելի, քան թէ երկրիս սովորութեանը։ Ակնեմ ուրեմն։—Հացի պակասութիւնը օրէցօր զգալի է դառնում մեզ համար։ Քաղաքային իրաւասուներից ոմանց խնդրքի համաձայն, ամսոյս 21-ին վարչութիւնը արտակարգ ժողով կազմեց հետևեալ խնդիրների համար. 1) խմանալու համար թէ սորանից երկու ամիս առաջ կազմված յանձնաժողովը, որին տրուած էր 10,000 ռուբլի՝ ալիւր գնելու համար, ինչ է արել։ 2) թէ ինչ միջոցով պէտք է հարկաւոր եղած հացը ճարել։—Առաջին խնդրի քննութիւնից երևեցաւ, որ յանձնաժողովը յանձնել է 10,000 ռուբլին իր անդամներից մէկին, որ Օդէսայից կամ Թիֆլիսից ալիւր բերել տայ, բայց այդ պարոնը բերել է

տուել մի 1200 բուրլու ալիւր, մնացած գումարը պահել է իր մօտ անգործադրելի, կամ ինչպէս ասում էին՝ իր համար պօլիմպրեալ է բերել տուել՝ օգուտ քաղելու։ Թէ այդ բերել տուած 90 մեչոկ ալիւրը և թէ արքունի ամբարից տրուած (կարծեմ) 400 մեչոկ ալիւրը՝ նոյն յանձնաժողովի հսկողութեան տակ բաժանվել է հացթուխներին էժան գնով, որ քաղաքիս բնակիչների համար հաց թխեն և լիտր 60 կոպէկով վաճառեն, բայց չանախնդիր հացթուխները ծախել են բարձր գներով գիւղացոց վրա թէ թխած հացը և թէ ալիւրը։ Քաղաքագլխի ասածից երևեցաւ որ այդ պայմանագնացութեան համար ինքը դիմել է նահանգական վարչութեան և ոստիկանութեան ու խնդրեր դրանց կողմից զօրաւոր հսկողութիւն գործադրվի, որպէս զի գիւղացոց հաց չը տան հացթուխները, բայց պատշաճաւոր օգնութիւն չէ ստացել նրանց կողմից։—Իրաւասուներից արդարացէս մեղադրված յանձնաժողովի անդամ Հաջի-Միրզայ-Հիւսէյնը, ըստ առաջարկութեան իրաւասու Վասիլ Եղիազարեանցի՝ յանձնառու եղաւ իր մօտ մընացած փողով բերել տալ ալիւր այն գնով, ինչ գնով որ 90 մեչոկը գնել է սորանից երկու ամիս առաջ և սորանով արդարացաւ....

Գալով երկրորդ խնդրին՝ երեք գլխաւոր առաջարկութիւն եղաւ. 1) իրաւասու Վասիլ Եղիազարեանցը առաջարկեց, որ ստորագրութեամբ ժողոված փողով գնված ալիւրը գործադրվի միմիայն քաղաքիս աղքատների համար. ասաց՝ ցուցակագրել իր օք աղքատների անունը, տալ իւրաքանչիւր ընտանիքին հարկաւոր եղած հացի համար ամսական տոմսակ, որով իրաւունք ունենայ ստանալ իր համար որոշված քանակութեամբ թխած հաց՝ այն հացթուխներից՝ որոնց կը տրուի վարչութենից ալիւր այդ նպատակի համար, իսկ նոքա (հարուստները) որոնց չի տրուի տոմսակ, գնեն իրանց համար հաց փոքր ինչ աւելի գնով այն հացթուխներից, որք չեն ստանում ալիւր քաղաքից։ Այս տոմսակների միջոցով կարելի էր իմանալ նախ՝ թէ օրական ինչքան ալիւր պէտք է տրուի քաղաքային վարչութիւնից. երկրորդ՝ տոմսակ ունեցողը կարող էր ապահով ստանալ իր բաժինը միայն. երրորդ՝ քաղաքի պարտքը կիսով չափ կը լինէր. չորրորդ՝ հարուստներն էլ աղքատի բաժին մասնակից չէին լինի և հինգերորդ՝ որ և է հսկողութեան հարկաւորութիւն չէր լինի։ Բայց այս առաջարկութիւնը չընդունվեց, որովհետև 1) վարչութեան անդամ պ. Բաբաջանեանցն անհնարին համարեց կարճ միջոցում աղքատների անուան ցուցակագրելը, ասելով որ՝ դորա համար հարկաւոր է առնուազն ամիս ու կէս ժամանակ՝ մոռանալով որ ամենամեծ քաղաքներն անգամ մի օրվայ մէջ կարողանում են ցուցակագրել. 2) այդ առաջարկութիւնը չը հասկացան իրաւասուներից խիստ շատերը, որովհետև սովոր չեն պատշաճաւոր ունկնդրութեան։ 3) Առաջարկութիւնն արաւ պ. քաղաքագլուխը՝ հիմնվելով ձայնաւորներից ոմանց առաջարկութիւնների վրա և այսպէս ձևակերպեց. տասը հացթուխի տալ օրական 60 լիտր ալիւր, որից կը գոյանայ 90 լիտր թխած հաց. դորա կէսը պարտաւոր են հացթուխները պատրաստելու մինչև առաւօտեան ժամի 7-ը, միւս կէսն էլ՝ մինչև ժամի 2-ը, զկնի ճաշուն. նշանակել իրաւասուներից օրական հերթապահներ, որոց պարտաւորութիւնը լինի գնալ նշանակած ժամերին հացթուխների խանութը, ստանալ թխած հացը կշռով և դնել դուրսը ծախելու համար։ Առաջարկութիւնն ընդունվեց, իբր հեշտ իրագործելի, որի հեշտութեան և ճիշդ կատարվելու մասին, առնուազն, տարակուսելի է։

4) Պէտք է ասել որ այդ երկրորդ առաջարկութիւնն ընդունվելուց յետոյ՝ իրաւասուներից սէկը, այն է Վարդան Եղիազարեանցը, առաջարկեց խորհրդին, այսպէս. որովհետև անկարելի է ճիշդ հսկողութիւն անել հացթուխների վրա, որ քաղաքիս բնակիչների համար պատուիրած հացից չը գողանան և թանկ գնով չը ծախեն կողմնակի մարդկանց վրա և որովհետև անկարելի է արգելել, որ գիւղացիք հաց չը գնեն քաղաքից՝ ուստի հարկաւոր է քաղաքային վարչութեանս ունենալ իր սեփական հացարանը, 5—6 հատ, սորանով մրցել միւս հացթուխների դէմ, վասն զի միակ մրցութիւնն է, որ կարող է նոցա սանձահարել։ Խորհուրդը չընդունեց առաջ այս առաջարկութիւնը, բայց երբ պ. Վ. Եղիազարեանցը հարցրուց թէ արդեօք, եթէ հացթուխները չընդունեն քաղաքային խորհրդի վճիռը և վաղը կամ միւս օրը փակեն իրանց հացարանները, այն ժամանակ ինչ պէտք է անել։ Խորհուրդն ի նկատի առնելով այս հարցը՝ վճռեց. այդ դէպքում բանալ 5—6 հացագործութեան խանութ քաղաքի հաշվով և սորա իրագործելու համար ընտրեց 5 անդամից բաղկացած մի յանձնաժողով, որը (չը գիտեմ ինչ մտքով) առաջին յանձնաժողովի հսկողութեան ներքոյ պէտք է գործէ։—Թէ ինչ հետևանք պիտի ունենան այս վճիռները, ոչինչ չեմ կարող ասել առ այժմ. բայց կը ցանկայի որ այսպիսի ստիպողական հանգամանքներում ք. վարչութիւնը կրկնապատկէր իր գործունէութեան եռանդը և աղքատ դասակարգի սննախանձելի վիճակին մարդասիրաբար կարեկցէր։—Մի երկու խօսք ևս Էջմիածնի վարչութեան դէմ խօսողներին։ Քաղաքիս պտղամաւորութեան յաջողեցաւ 100 խալվար ցորեն գնել Էջմիածնից, խալվարը 80 բուրլիով։ Չը գիտեմ ուրիշների կարծիքը այդ վաճառքի մասին ինչ կը լինի, բայց ես կասեմ որ՝ ինչ որ ընծայ կամ ողորմութիւն է, պէտք է իր ընթացիկ գնովը վաճառվի. այդ կէտից նայած, պէտք է չատ շնորհակալ լինել Նորին Օծութիւնից, որ բարեհաճեց այդքանը գոնէ վաճառելու այդ գնով։ Հաստատ աղբիւրից գիտեմ որ Էջմիածինը կերակրում է, բացի իր միաբաններից՝ օրական 200 հոգի ևս, որոց մեծ մասը Թիւրքիայից գաղթականներն են կազմում։ Այս 200 հոգին, վանքի միաբանների հետ՝ կազմում են մօտ 300 հոգի, որոց հացի բաւ լինի օրական մօտ մի խալվար ցորեն, այն ինչ վանքի ամբարում 600—650 խալվար է մնում միայն, որից Էջմիածնի պէս վանքը պէտք է գոնէ մի տարվայ պաշար պահէ և մնացածովն էլ իր շրջակայ և սեպհական գիւղերին օգնէ։

Սկուռնի

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆԴԻՑ

—

18 յունվարի

Այս տարի Կովկասի ամեն կողմերից հազար ու մի տխուր լուրեր են հասնում հացի թանգութեան պատճառաւ, ամեն տեղ ժողովուրդը վըրդոված լարված վիճակի մէջ է, ամենքի խօսակցութեան առարկան հացի թանգութիւնն է. հազարաւոր բուբլիներ մխվում են սովի առաջն առնելու, բայց դարձեալ բաւական չէ, դեռ ձմեռը և գարունը չատ փողեր պիտի կուլ տան և ով գիտէ ինչպէս կանցնի ամառը։

Մենք հայերս միշտ զարմնում ենք այն ժամանակ, երբ վտանգը արդէն հասնում է և դանակը ոսկորին դէմ ընկնում, իսկ նրանից առաջ մեզ համար ամեն մի զօրութիւնը ջլատող երևոյթ, ամեն մի սպառնացող վտանգ նշանակութիւն չունի. մենք չենք հեռատեսում թէ ինչ կը լինի այս կամ այն վտանգի հետևանքը և ամենևին չենք աշխատում իր ժամանակին նրա առաջն առնել, այլ ընպասում ենք մինչև որ վտանգը գալիս է և սկսում է իր ազդեցութիւնը բանեցնել, ահա այն ժամանակ միայն զարթնում ենք և հանդէս դուրս գալով ձայն տալիս, թէ ժողովրդի այս ինչ պէտքը պիտի հոգացվի, դարման տանվի։ Մինչև մեր ժողովներ կազմելը, փող հաւաքելը, պաշար բերել տալը ունևորը սնանկանում է, սնանկը աղքատանում, իսկ աղքատի օրը աւելի սևանում և դառնանում։ Քաղաքացին գոնէ կարող է մի կերպով իր գլուխը պահել, բայց գիւղացին ինչ պէտք է անէ իր աննախանձելի դրութեան մէջ, չէ որ նա ամամայ իր ունեցած չունեցածը հացի պիտի տայ սովից չը մեռնելու, մանգամայն յոյսը Աստուծու վրա դնելով, բայց թէ ինչ խեղճութիւններ են պատահում, այդ ինքն ըստ ինքեան յայտնի է։

Ո՞վ պէտք է հոգայ գիւղացու վիճակի բարւոքմանը, գիւղացին. նա տդէտ է, նա անկարող է դեռևս։ Քաղաքացին որ այնչափ չահվում է նրանից, որ այնքան սերտ կապ ունի նրա հետ, չը պէտք էր սառն ու անտարբեր մնար դէպի նրա թշուառ վիճակը, նրա կեցութիւնը. չէ որ նրա չահերը իր իսկական չահերն են։ Եթէ քաղաքացին ուզում է իր անձի չահը, անպատճառ պիտի բարւոքէ գիւղացու դրութիւնը։ Դժբաղդաբար մինչև այսօր հայ գիւղացու և հայ քաղաքացու մէջ մի անանցանելի անդունդ կայ։ Քաղաքացին չը նայելով որ ամեն օր գիւղացու տաժանակիր աշխատութեան արդիւնքն է վայելում, դարձեալ հեռու է պահում իրեն և մի տեսակ արհամարհանքով նրա վրա նայում։ Նա կարծում է թէ գիւղացին մի տեսակ արարած է, որ բնութիւնից սահմանվել է միայն իրեն սարկաբար ծառայելու, իր պէտքերը լցնելու, այդ իսկ պատճառաւ էլ չէ թափանցում նրա ներքին վիճակին, չէ աշխատում նրա նիւթական ապահովութեան և բարոյական զարգացման համար. քաղաքացին բոլորովին հեռու է այդպիսի դաւադիրներից։

«Մշակը» իր համարներում անդադար կրկնում է գիւղացու ապահովութեան համար, քանի քանի միջոցներ է առաջարկում, բայց ոՒ, մեր հայերը այնքան փափուկ սիրտ չունեն ճշմարտութիւնը ընդունելու, նրանք մի քանի տարի չարունակ փորձութեան պիտի մատնվին, որ ապա թէ ըսկսեն մի բան անել։ Փառք Աստուծու, մի երկու տարի է որ փորձութեան համը առնում ենք, այսուհետև գոնէ աշխատենք ապագայի փորձառներից աղատվելու, այսուհետև գոնէ խելամտենք, որ մինչև մեր մէջ ընկերութիւններ չը կազմվին՝ գիւղացու կեանքը ապահովացնելու, գիւղատնտեսութիւնը ծաղկեցնելու, նրան նահապետական դրութիւնից հանելու, մենք միշտ պիտի վնասվենք և տասապատիկ տուժենք։

Դէրբէնդը, ինչպէս երևում է, ամբողջ Կովկասում ամենաերջանիկ դրութեան մէջ է գտնվում հացի կողմանէ։ Ալիւրի պուդը չրջակայ քաղաքներում հասել է մինչև 2 բուբլի 50 կոպ., մինչդեռ այստեղ 1 բուբլի 50 կոպէկով կարելի է լաւ ալիւր գնել. թէ քաղաքը և թէ մասնաւոր անձինք ժամանակին եթէ ոչ առատ, գոնէ մինչև ամառնամուտը բաւականացնող ցորեն են գնել և այժմ ալիւր չունելով վերոյիշեալ գնով ծախում։ Միսը թանգ է, ֆունտը 10—12 կոպ. ոչխարին, իսկ տաւարինը 8 կոպէկ. բայց բնութիւնը այդ կողմից էլ օգնել է մեզ, վայրենի բաղերը խմբերով լիքն են թէ ծոլը և թէ դաշտերը, այնպէս որ հատը 10—12 կոպէկով ամեն օր մեն են ածում։

Ամսիս 15-ին ռուսները մի ներկայացում տուին յօգուտ տեղական քաղցած մուսուլմանների համար. բարձրաստիճան մարդկանց կանայք թէ հայերից և թէ ռուսներից կառավարչի պաշտօն էին կատարում բուֆետում, որի եկամուտը յատկացրած էր նոյնպէս մուսուլմաններին. ներկայացումը բաւականին յաջող անցաւ և մեծ տպաւորութիւն գործեց։ Թող օրինակ առնեն մեր հայերը ռուսաց այս մարդասէր վարմունքից։

Դէրբէնդցի

ՆԱՄԱԿ ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ

—

22 յունվարի

Սարիղամիշ գիւղը գտնվում է Դարսի նահանգում։ Ռուս-Թիւրքական պատերազմից առաջ այս հայաբնակ գիւղը բաւական բազմամարդ էր։ Բնակիչները պարապում էին երկրագործութեամբ, գլխաւորապէս և վաճառականութեամբ մասնաւորապէս։ Բայց խեղճ և անդորր, առանց ուրիշներին մազաչափ վնաս հասցնելու, ընթանում էին իրանց ընտրած խաղաղ և բնական չաւղով։

Այն ինչ, երբ պատերազմն սկսվեցաւ՝ կորաւ, բռնարարվեցաւ նոցա խաղաղ կեանքը, նոցա կեանքին սպառնացաւ անապահովութիւն, մահ, նեղութիւն, տանջանք.... և չատերը տալով իրանց բոլոր ունեցած կարողութիւնը—ունեցած չունեցած հարստութիւնը, իրանց կենսական անհրաժեշտ միջոցներն գայլերին, որոնք մարդկային պատկերով ու հանդերձով յայտնվել էին և այս կողմերից մեծ քանակութեամբ զոհեր էին տանում, այլ և տուժեցան իրանց կեանքով։

Պատերազմի վերջանալուց փոքր ինչ առաջ, այս խեղճ արարածները, չը կարողանալով տանել ամենայն տեսակ տմարդի կամայականութիւն, ցրվեցան այլ և այլ տեղեր, որոնց մնացորդները այժմ այստեղ կազմում են մի քանի հայ ընտանիք, որոնք պարապում են երկրագործութեամբ և մանրավաճառութեամբ (զօրքի վրա)։

Պատերազմը վերջանալուց յետոյ այստեղ մշտական զօրք ուղարկվեցաւ։

Այս ծննդեան տօնին ռուսները մեծ պատրաստութիւն էին տեսնում այդ մեծ տօնը կատարելու։ Այն ինչ մենք, հայերս, ոչ եկեղեցի ունէինք և ոչ էլ քահանայ, ուստի մենք պէտք է զուրկ մնայինք դորանից, եթէ մայոր Ղորխմազ Յովհաննիսեանը չը հրաւիրէր մերձակայ հայաբնակ Քեաքաջիս գիւղի Մեսրոպ քահանայ Տէր-Յովհաննիսեանցին և տօնակատարութեան համար իր տանը տեղ չը տար։

Այս առաջին ազգասիրական գործը չէ, որ մ. Ղ. Յովհաննիսեանը կատարում է, նա չատ անգամ է օգնել խեղճ և անճար հայերին։

Մկրտիչ Տէր-Սիմէոնեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ջանֆուտ, 17 դեկտեմբերի

Ձեր լրագրի 1879 թուականի 200 համարում յայտնած էր մի քանի չուչխիների գանգատը, որոնց օգնութեան ես դիմել էի «Կովմածաղիկ» վէպը տարածելու համար։

Իմ պարտքս էր պ. պ. ստորագրողներին բաւականացնել, բայց ես ստորագրութեան թերթը և գումարը հեղինակին ուղարկելիս, յայտնել էի նորան իմ հեռանալը Շուչուց, և խնդրել ուրիշն յանձնելու գրքերը բաժանելու գործը։

Ցոյս ունեմ որ չուչեցի պ. պ. ստորագրողները կը դիմեն հեղինակին, նրան ուղղելով իրանց պահանջը։

Ա. Թոխմախեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 28 յունվարի

Հաստատ աղբիւրներից տեղեկանալով Վանի անտանելի սովի մասին, իսկոյն սկսեցինք նուիրատուութիւններ ժողովել զանազան դասակարգի մարդկանցից, որի գումարն եղաւ հարիւր քսան և երկու բուբլի ութսուն և մէկ կոպէկ. ի միամտութիւն նուիրատուներին. խնդրում ենք ձեզանից, պ. խմբագիր, տեղի տալ տպելու նոցա անունները ձեր պատուական լրագրում և ուր հարկն է չուտով տեղ հասցնել։

Ցարութիւն Շահազիզեանց 5 բուբլ, Մ. Ռոստոմեանց 5 բ., Յ. Աղամիրեանց 5 բ., եղբարք Մնացականեանք 5 բ., Ի. Յովհաննեանց 5 բ., Յ. Յովհաննեանց 5 բ., Ակէքսան Ն. Միլիլեանց հարուստ վաճառական 6 կոպ., Աւ. Խօջամիրեանց 3 բ., Դրամբեանց 3 բ., Ցարութիւն Գէորգեանց 3 բ., Ակէքսանդր Ալմեանց 3 բ., Տիգրան Յովհաննեանց 3 բ., տիկին Սալոմէ Ջաղաթեանց 2 բ., Արշակ Յովհաննեանց 2 բ., Նիկողոս Նիկողոսեանց 2 բ., Մ. Դանդուրեանց 2 բ., Բ. Յովհաննեանց 2 բ., կարապետ Ալանեանց 2 բ., Սարգիս Գասպարեանց 2 բ., Գասպար Տէր-Օհանէսեանց 2 բ., Հայրապետ Սուլխանեանց 2 բ., Անյայտ ոմն 2 բ., Զ. Գրիգորեանց 1 բ., Ս. Գուլամիրեանց 1 բ., Յովհաննէս Զամոյեանց (ուսանող) 1 բ., Միմէոն Պետրոսեանց 1 բ., Ակէքսանդր Սուսանեանց 1 բ., Եագօր Յովհաննեանց 1 բ., ոմն 1 բ., Սերիբբեակով (ուսանող) 1բ., Միրզայ Ս. Տէր Յովհաննէսեանց 1 բ, Բարսեղ ա. Նիկողոսեանց 1 բ., ժամագործ հայ 1 բ., ժամագործ հայ 1բ., Սափրիչ հայ 1 բ., Համազասպ Սաֆրազեանց 1 բ., Սարգիս Մակարեանց 1 բ., Ստեփան Սուլխանեանց 1 բ., Յովհաննէս Բարխուդարեանց 1 բ., Մինաս Պատրեանց 1 բ., Մարգար Տ. Օհանէսեանց 1 բ., Առաքել Խաչումեանց 1 բ., Գէորգ Տապատապեանց 1 բ., Մարտիրոս Շիգանեանց 1 բ., Սէրգէյ Բազազեանց 1 բ., Սմբատ Բարսամեանց 1., Եագոր Կուզանեանց 1 բ., Ս. Ղարաջով 1 բ., Ս. Ցարութիւնեանց 1 բ., Յ. Մխիթարեանց 1 բ., Աւետիսեանց 1 բ., Արտէմ Սարուխանեանց 1 բ., Ս. Մամիկոնեանց 1 բ., Եագօր տէր Ստեփանով 1 բ., Ն. Կոլմանեանց 1 բ., Ջիմէէր Սունդուկով 1 բ., Պ. Սաղոյեանց 1 բ., Ս. Դափելեանց 1 բ., Յ. Բոչնազեանց 1 բ., Յ. Սաղազեանց 1 բ.. Ա. Վարդանեանց 1 բ., Ս. Վարդանեանց 1 բ., Ա. Շաքարով 1 բ., ախալցխացի 1 բ., հայ ոմն 1 բ., հայ ոմն 1 բ., Մելիք-Մեհրաբեանց 1 բ., Մելիք Մուրադեանց 1 բ., Արտէմ Տէր-Յովհաննէսեանց 1 բ., Կ. Վարդանեանց 1 բ., Շուշանիկ Խօջամիրեանց 1 բ., Պիճիկեանց ուսանող 50 կ., Ջիլինկարեանց ուսանող 50 կ., Վասիլ Մամիկոնով 50 կ., Հախվէրդ Հախվէրդեանց 50 կ., Սարգիս Մնացականեանց 50 կ., կարապետ Սիմէոնեանց 50 կ., Գրիգոր Շահնազարեանց 50 կ., Ա. Խաչատուրեանց 50 կ., Եագոր Մելքեանց 50 կ., Յ. Միրումեանց 50 կ., Դիմրգի Լիմոնով 50 կ., Ֆ. Գարսոն 50 կ., Մկրտիչ Խաղաղարեանց 50 կ., Ա. Վարդանով սափրիչ 30 կ., Ն. Մատինով (երեխայ) 25 կ., կասումով ուսանող 20 կ., Դոնդուրեանց 20 կ., Լուսէն Թուխուեանց 20 կ., Ալեսակէր պարսիկ 10 կ.. Գումարն է 122 բ. 81 կ.։

Ս. Գուլամիրեանց և Աւ. Խօջամիրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ օրերումս պ. Մ.-ի տան մէջ եղած հացկերոյթի ժամանակ մի քանի պարոններ յօգուտ քաղաքի չքաւորների նուիրել են 54 բուբլ։

—

Վերջին օրերի ընթացքում ԹԻՖԼԻՍՈՒՄ եղանակը փոխվեց։ Օրերը տաք և գարնանային են։

—

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ իր խմբագրութեան ինսպեկտորիւ յօգուտ սովալլուկների տուած ներկայացումից ընդհանուր եկամուտ եղել է 1075 բ. 40 կ., թատրոնի վարձ տուած է պ. Պալմին 300 բ., ուրեմն մնացել է 775 բ. 40